**325. ԼՈՐ. «ԾԱՌՈՒ» Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ** *եկեղեցու հարավային կողմի լուսամուտի տակ արտաքուստ ագուցված արձանագրության մաս, մի քարի վրա.*



ՎԵՐԱԿԱՑՈՒ ՍՈՐԻՆ . . .
ԶՏՐ ՍԻՄՈՆԻՆ ԵՒ ՍՄԱՐԳՍԻ
ՀԱՒՐ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻՈՒՆ...

## ԴԱՐԱԲԱՍ (ՀՆՈՒՄ ՂՈՒԵՐԾ)

*Հնում Ղուերծ անունով երկու գյուղ է գոյություն ունեցել. մեկը Հարանդ գավառում (այժմ Գորիսի շրջան) և մյուսը Ծղուկ գավառում (այժմ Սիսիանի շրջան). առաջինի հարկի չափը եղել է 12 և վերջինի՝ 10։*

*Մեր նկարագրածը նախկին Ծղուկ գավառի Ղուերծն է, այժմ Սիսիանի շրջանի Լորաձորի հովտում և կոչվում է ԴԱՐԱԲԱՍ։*

*Այս գյուղի անունը առաջին անգամ հիշատակվում է Ստ. Օրբելյանի օգտագործած վավերագրերի մեջ՝ 844 թվին*[1]*։*

*Գյուղում այժմ կան հետևյալ հուշարձանները.*

1. Ս. Աստվածածին. *եկեղեցի. համաձայն այժմ ուգոյություն չունեցող արձանագրության, շինել են Տարսայիճ Օրբելյանն ու իր կին Մինախաթունը, 13-րդ դարի երկրորդ կեսին։ Այս եկեղեցուց մնում են այժմ միայն հիմնապատերը, բեմի կողքերին կանգնած մեկական խաչքարեր և շուրջը թափված մի քանի այլ խաչքարեր ու մշակված քարեր։*

2. Ս. Ստեփանոս. *եկեղեցի, նախորդից քիչ արևմուտք, փոքրիկ թաղակապ շենք է եղել, կտուրն ամբողջովին թափված է այժմ. շինված է կոփածո քարերով։*

3. Գերեզմանատուն. *գտնվում է գյուղի հյուսիսային ծայրին. այստեղ կան խաչքարեր և գերեզմանաքարեր. մի մասն արձանագրված, հնագույնի թվականը 1314.*

Կամուրջ. *գտնվում է գյուղից ներքև, Որոտան գետի վրա. միակամար գեղեցիկ կառուցվածք է, կամարը սրբատաշ քարերով. աջ ափին հենված է քարաժայռերի վրա, իսկ ձախ, ցածր ափը արհեստականորեն բարձրացված է պատնեշներով ու թմբով. համաձայն արձանագրության՝ շինված է 1675 թ.։ Տեղում հայտնի է «Արզումանի կամուրջ» անունով։*



**326. ԴԱՐԱԲԱՍ.** *ս. Աստվածածին եղեղեցու բեմի հարավից կանգնած խաչքարի և պատվանդանի վրա.*

ԹՎ. :ՉԼՋ: | ՅԱՆՈՒՆ ԱՅ | ԵՍ
ՄԱՆՈՒ|ԵԼ ԿԱՆԳ|Ն|ԵՑԻ ԶԽԱՉՍ
ՀԱՒՐ | ԻՄ ՍԵԹ ՔԱՀԱՆԱՒ
ՅԻՇԵՑ|Էք Ի ՔՍ.
ՍԱՆՎԵԼ ՔԱՀԱՆԱ ՈՐԴԻ ՍԵԹ
ՔԱՀԱՆԱՒ ԵԴԱՆ Ի ՄԻՈՒՄ
ՏԱՊԱՆԻ. ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ. ԱԾ.
ՏՂԱՅ ՀԱՍԱԿՆ [Չ]. ԹՎ. :ՉԾԵ:

*Պատվանդանի վրա երեք խորաններ են, որոնցից հյուսիսայինը պարապ է։*

*Լուսանկ. տախտ.* XXXII, 125.
*(Թվականի մասը չի երևում)։*

[1] *Ստ. Օրբելյան, 210*

*327. ԴԱՐԱԲԱՍ. ս. Աստվածածին եկեղեցու բեմի հյուսիսից կանգնած խաչքարի տակին. 4 տ.*



ԹՎ. :ՉԼԷ: | ԵՍ ԳՐԳՈՐ
ԿԱՆԳՆԵՑԻ | ԶԽԱՉՍ ՀԱՒՐ ԻՄ
ՎԱ|ՐՀԱՄԱ. ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ

*Լուսանկ. տախ.* XXXII, 124

*328. ս. Աստուածածին եկեղեցու ավերակների մեջ ընկած խաչքարի տա-կին. 2 տ.*



ԱՆԱՆԻԱՑ ՔԱՀԱՆԷՍ ԿԱՆԿՆԵՑԻ | ԽԱՉՍ
ՀԱՒՐ ԻՄ ՄԵԼՔԻՍԷԹ ՔԱՀԱՆԱՒ ԹՎ. :ՌԻ:

*Լուսանկ. տախտ.* XXXIII, 126

*329. ԴԱՐԱԲԱՍ ս. Աստվածածին եկեղեցու ավերակների մեջ ընկած փոքր և գեղեցիկ խաչքարի ճակատին. 4 տ.*



ԵՍ ԻԻՃ ՂԱԶԱՐ ԱԿՈԲՈՑ | ՈՐԴԻ ԷՐԷՎԱՆՑԻ
ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ԿՈՂԱԿԻՑ ԻՄ ՊԱՀՈՆ|ԱՑ
ՀԱ[ՑՈՑ] ԹՎ. :ՌԼ: ՅԻՇԵՑԷՔ:

*330. ԴԱՐԱԲԱՍ. ս. Աստվածածին եկեղեցու ավերակների մեջ ընկած պա-տուհանի խաչաձև քարի վրա. 1 տ.*



ՅԻՇԱՏԱԿ ՇՈՒՇԱՆԻՆ

*Լուսանկ. տախտ.* XXXIII, 127

*331. ԴԱՐԱԲԱՍ. գերեզմանատուն. տափակ գերեզմանաքարի երեսին. 7 տ.*



ԹՎ. :ՋԿԳ: | ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ
ԿՈՇ|ՈՌԱ ՈՐԴՈ | ԽՈՑԱԴԵՂԱ | .
ՅԻՇԵՑ|ԷՔ Ի ՔՍ.

**332. ԴԱՐԱԲԱՍ.** *գերեզմանատուն. օրորոցաձև տապանաքարի վրա. 2 տ.*



ԱՅՍ Է ԴԱՊԱՆ ՄԿՐՏՉԻ ՈՐԴԻ ՄԱՀՏԱՍԻ
ՂԱՐԱՄԻՆ ԹՎ. :ՌՃԽՉ: ԷՐ

**333. ԴԱՐԱԲԱՍ.** *գերեզմանատուն. կոտրված խաչքարի տակին. 4 տ.*



ԵՍ ՓԻՐՂՈՒԼԻ | ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ
ՀՈԳՈՑ . . . . . . .[1]

**334. ԴԱՐԱԲԱՍ.** *գյուղի հյուսիսում, գերեզմանատան մեջ օրորոցաձև տապանաքարի հարավային կողին. 5 տող.*



ԵՍ ՃԻՄՇԻՏՍ ԿԱՆԿՆԵՑԻ | ԽԱՉՍ
ՀԱՒՐՆ ԻՄ ՄԱՆՍՈՒՐԻՆ.

**335. ԴԱՐԱԲԱՍ.** *գյուղից հյուսիս-արևելք, Որոտան գետի վրայի միակամար կամուրջի (Արզումանի կամուրջ) ձախափնյա կրունկի հարավային կողին. 9 տող.*



Ի ԹՎԻՆ ՀԱՅՑՈՅ :ՌՃԻԹ: Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ | ՇԱՀ ՍԼԷՄԱՆԻՆ ԵՒ ԻՇԽԱՆ ՏԵՂԱՑՍ ՍԱՂՍՈՏ ՊԷԿԻՆ, ՈՐ ԷՐ ՎԵՐԱԿԱՑԻ ՏԱՆՆ ԱՐՔՈՒՆԻ ՇԻՆԵՑԱՒ ԿԱՄՈՒՐՋՍ ՀԱՃԻ ԸՌԸՋՎԱՆ ԱՂԻՆ ՑԻՇԱՏԱԿ ԻՒՐՆ, ՈՐ ԷՐ ԴԱՐՈՒՂԱՑ ՏԵՂԻՍ ԵՒ | ԲԱՋՈՒՄ ԳԻՒՂՈՐԷԻՑ ՍՄԻՆ ԳԱԽԱՌԻՆ, Ի ՄԷՋՆ ԲՆԱՒ | ....... ՄԵԾԱ | ......... ՍՐ.... ՈՑՍ ՏԵՂԱՑՆ ՓԱՌՔ—ԱՐԱՐՉԻՆ: ՋԵՌԱՄԲ ՈՒՍՏԱՑ ՀԱՑՐԱՊԵՏԻՆ:

[1] *Գրված է բարձր և անմատչելի տեղում և միայն հեռադիտակով հնարավոր է կարդալ: Վերջին տողը փոքր տառերով է գրված, տեղի նեղության պատճառով:*

*ԴԱՐԱԲԱՍ գյուղի սահմաններում հնում եղել են նաև հետևյալ արձանագրությունները, որոնք այժմ չկան.*

**336. ս. ԱԾԱԾՆԻ** *հյուսիսային պատին ներսից.*

Ցուսով ամենակալին Աստուծոյ ես Տարսայիճս իշխանաց իշխան որդի մեծին Լիպարտին, եւ ամուսին իմ Մինախաթուն դուստր մեծին Դալին, կողմնակալ յայսմ նահանգի՝ զոր ես մեզ Ած ի Բարկուշատայ մինչ ի դաշտն Դվնայ, շինեցաք Ածածինս ի հալալ արդեանց մերոց ի փրկութիւն հոգւոյ և յերկարութիւն կենաց մերոց. տուաք ի պէտս սպասաւորաց Սունակայ տափին հողն, նահատակին հողն, և ներքի ծաղկոցն ի Շնհեր, ի Տաթևայ լուսագին. և կատարի ի տարին :Ժ: ժամ. :Ե: յայտնութեան :Ե: զատկին, մասն ինձ Տարսայիհիս և Մինայխաթունին. եթէ ոք ի մերոց կամ յաւտարաց խափանեսցէ զսահմանեալս մեր, :ՅԺԸ: հայրապետաց նզոված է, թուին :ՉԻԱ:

*Վերցնում ենք Շահխաթունյանից, Բ. 364.*
*Տե՛ս նաև Լալայան, Ազգ. հանդ. Գ. 165,*

**337.** *վերոհիշյալից ներքև.*

Շնորհօքն Այ նորոգեցի զԱծածինս :ՌՃԻԶ: թվին, վերակացութեամբ
Տէր Մարտիրոսին և տէր Գևորգին տէր Եփրեմին

*Լալայան, Գ. 165*

**338. ս. ԱԾԱԾԻՆ** *եկեղեցու հյուսիսում մի գերեզմանաքարի վրա.*

Այս է հանգիստ գե(ղեցիկ) մանկան պրն Սմպատին իշեցէք ի Քս. թվ. :ՉԽԳ:

*Լալայան, Գ. 165*

**439. ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ** *մեջ մի խաչքարի վրա.*

Ես թագվոր Խէրան Սուլթան կանգնեցի խաչս փրկութիւն
հոգւոյն մերում. թվին :ՉԽԴ:

*Լալայան. Ազգ. հանդ. Գ. 165*

## ԲՆՈՒՆԻՍ

*Գտնվում է այժմ Սիսիանի շրջանի մեջ. հնում եղել է Ծղուկ գավառի մեջ և համաձայն իր վճարած հարկի քանակի (6 չափ)՝, եղել է ամենափոքր գյուղերից մեկը։*

*Գյուղի հնագույն հիշատակությունը 906 թ. է, երբ Սյունյաց գահերեց իշխան Աշոտը նվիրում է այն Տաթևի վանքին։*

*Այս գյուղի նշանավոր հուշարձանը մի կոթող—խաչքար է, կանգնած գյուղի հյուսիսում գտնվող գերեզմանատան մեջ. արևմտյան երեսին ագուցված խաչքարի վրա և շրջանակներին չորս արձանագրություն են փորագրված և մնացած մասերը գեղեցիկ քանդակներ, իսկ արևելյան երեսին եղել են առյուծի և վագրի բարձրաքանդակներ, որոնց ոտքերի տակ մի կաքավ։*